նում ուռճացած Հայ նախարար Պարթեւներից մի ընտանիք, արեւելեան սովորութիւնների համաձայն Հիւրկանիայի եւ Բակտրիայի հովիւների եւ հողերի վարչութիւնը սատրափի պաշտօնը կապալով վերցրած էր Աքեմենիդներից եւ այնտեղ շահագործում էր ժողովրդին։ Ճիշտ Դարեհի եւ Արտաշէս Ոքոսի օրով ինչպէս որ կապալով էին տալիս վիճակները այս ու այն սատրափին, նոյնը կատարուում էր մեր օրերում, մինչեւ Ի-րդ դարի սկիզբները։ Ահա այս Պարթեւ-Պահլաւները հանդամանքից օգտուեցան, Իրանի ժողովրդի եւ իշխանների տրամադրութիւնը շահագործելով՝ տիրեցին արքայից-արքայի գահը եւ ընկճեցին Սելեւկեաններին։ Եթէ Դարեհ Վշտասպեանի ժամանակ մի հայ սատրափ կարողանում է ապստամբել, Բաբելոնում թագ ու թագաւորութիւն հաստատել, պարսկական ինքնակալութեան ուժեղ շրջանում, ի՞նչի զարմանալ, որ Պարթեւ սատրափները կարողացել են Սելեւկեաններին դուրս մղել երկրից եւ ձեռք բերել արքայից-արքայի գայիսոնը, ամբողջ Իրանի կալուածատէր խաների աջակցութեամբ։ Մանաւանդ որ ամբողջ Հայաստանի նախարարական տների համակրութիւնն ու աջակցութիւնն էին վայելում Պարթեւները. այնպէս որ նրանց հետ արիւնակցական, խնամիական կապերով կապուած էին։ Այս էլ պէտք է նկատի ունենալ, որ Իրանի եւ Հայաստանի իշխանական տները